«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5

31.01.2022թ.

1. 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման նախնական տվյալների, ինչպես նաև ուսանողների գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգում ինքնուրույն աշխատանքի ձևաչափ սահմանելու հարցի վերաբերյալ.

1.1. 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, առարկայական պարտքերի հանձնման բոլոր երեք հնարավորությունները (հանձնում և երկու վերահանձնում) չսպառած համալսարանի 5-րդ կուրսի ուսանողներին՝ բացառության կարգով, ընձեռել հնարավորություն՝ մինչև սույն թվականի փետրվարի 15-ը հանձնելու առարկայական պարտքերը:

1.2. Կուրսային աշխատանքները/նախագծերը, ինչպես նաև քիմիա առարկայի լաբորատոր աշխատանքների արդյունքները՝ բազմագործոնային համակարգով գնահատման ժամանակ կարող են սահմանվել որպես ինքնուրույն աշխատանք: Հիմք կարող է հանդիսանալ հաստատված առարկայական ծրագիրը կամ ամբիոնի նիստի արձանագրությունը:

2. ՀԱԱՀ ՌԾ գործառնական պլան 2021 թ.-ի ամփոփիչ արդյունքների և 2022 թ.-ի անելիքների վերաբերյալ.

2.1. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Աղասարյանին և ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին մինչև փետրվարի 28-ը ավարտել աշխատանքային կիսամյակի կազմակերպման ուղեցույցի աշխատանքները:

2.2. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին.

- բացատրական աշխատանքներ իրականացնել ուսանողների հետ, կարևորել օտար լեզվի իմացությունը և միջազգային շարժունության ծրագրերին մասնակցությունը,

- մշակել ստորաբաժանման գործառնական պլանը, ԳԱՑ-երը և մինչև ս.թ. մարտի 15-ը ներկայացնել ՈԳԱ կենտրոն:

3. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ.

3.1. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին՝ սեղմ ժամկետում ամփոփել համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների մոնիթորինգի արդյունքները, խմբավորել ըստ ֆակուլտետների և տրամադրել ստորաբաժանումների ղեկավարներին:

3.2. Հանձնարարել ՈւԳԿ վարչությանը՝ համակարգիչներով կահավորված, նյութի ցուցադրության հնարավորություններով լսարանները տրամադրել դրա կարիքը ունեցող պրոֆեսորադասախոսական կազմին:

4. ՀԱԱՀ ստորաբաժանումներում օգտագործման համար ոչ պիտանի կամ կոնկրետ տվյալ ստորաբաժանմանը ոչ անհրաժեշտ գույքի դուրս գրման շրջաբերականի վերաբերյալ վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

5. արհմիության անդամավճարների մասին որոշման վերահաստատման անհրաժեշտության վերաբերյալ.

Հանձնարարել արհմիության նախագահ Ա. Աղաջանյանին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ քննարկել կոլեկտիվ պայմանագրի օրինակը և հարցը ներկայացնել գիտական խորհրդի առաջիկա նիստի հաստատմանը:

6. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ԳՄՍ 1-ին կուրսի ուսանող Գոռ Հրայրի Միքայելյանին 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի քննությունները հանձնելու համար լրացուցիչ ժամկետ տրամադրելու հարցի վերաբերյալ.

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ԳՄՍ 1-ին կուրսի ուսանող Գոռ Հրայրի Միքայելյանին 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի առարկայական պարտքերը հանձնելու համար տալ լրացուցիչ ժամանակ մինչև ս.թ. փետրվարի 15-ը:

7. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ԳՏ 3-րդ կուրսի ուսանող Նարեկ Գնելի Միքայելյանին 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը վճարելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ԳՏ 3-րդ կուրսի ուսանող Նարեկ Գնելի Միքայելյանին՝ 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարի պարտքը մարելու համար լրացուցիչ հնարավորություն ընձեռել մինչև սույն թվականի փետրվարի 28-ը:

8. Կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Մ. Բաղալյանի կողմից ներկայացված զեկուցագրի (առաջարկվել է ՀՈՒԴ ուս. պլաններում կատարել փոփոխություն) վերաբերյալ.

Հաստատել ՀՈՒԴ ուս. պլաններում առաջարկվող փոփոխությունը և տալ ընթացք՝ գործող կարգի համաձայն:

9. 2016թ քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ՀՈՒԴ թվով 57 ուսանողների համար 2021-2022 ուս. տարվա ուսման վարձավճարի զեղչ սահմանելու հարցի վերաբերյալ:

Հանձնարարել գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ հարցը լրացուցիչ քննարկել և ներկայացնել առաջարկություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ